

աւելի հեռու հայ աշխարհէ մը ելեր եկեր էր, յԱրցախոյ աշխարհէն՝ Մայրեաց-Նուրք ըստած տեղէն, և էր իշխանն Օշին. Լամբրոնի հետ ընծայեց անոր իր հայրենի տունէն բերած և անոր սրբազան պահպանակ Ս. Պետրոսի գլխաւոր առաքելոյն մասունքն, զոր հանգոյց Օշին շինած տաճարին մէջ 'ի Լամբրոն, զոր և նորոգեց ու ամրացուց. և ինքն այլ հոն դրաւ ու գտաւ իր գերեզմանը. իր համանուն թոռն Օշին (որդի Հեթմոյ) հայր եղաւ հռչակաւոր Ս. Ներսիսի (Լամբրոնացոյ) : Իսկ Հասանայ որդին Ապլղարիպ այլ ննջեց 'ի Պապեռօն, առաջուց բաժնելով ժառանգութիւնը. կ'երևի թէ արու զաւակ չունէր. մէկ դուստրը հարսնացուց Դաւթի՝ Գաղիկ Բ Բագրատունեաց վերջին թագաւորին որդւոյն. միւսն այլ տուած կ'երևի Օշնի. վասն զի ասոր որդին Հեթում՝ զբերդն Պապեռօնի տուաւ իր Սմբատ որդւոյն. ըսել է որ ինքն էր անոր մերձաւոր ժառանգն. (զՏարսոն այլ Ապլղարիպ տուեր էր Օշնի փեսայ իշխանի մը) : Այս Հեթմոյ որդւոց անդրանիկ ճիւղն յաջորդաբար տէր եղաւ Լամբրոնի. երկրորդն այլ՝ Պապեռօնի. որոյ առաջին տիրացող յիշեալ Սըմբատն՝ իր Ռիթա դուստրը տուաւ 'ի կընտութիւն Ստեփանէի՝ Ռուբինեանց պապազատին. յորոց ծնաւ մեծն և առաջին թագաւորն Լեւոն. ասոր դուստրն և ժառանգն Զապել դչխոյ՝ հարսնացաւ յիշեալ Սմբատայ թոռան՝ Կոստանդին Մոզոնի (որդւոյ վասակայ) որդւոյն

հետ, որ է Հերոշմ Ա. և այսպէս միացան երկու ճիւղքն Պապեռօնեան և Լամբրոնեան, և երկու մեծ ցեղքն՝ Արծրունի և Բագրատունի, թէ և մայրենախառն : Այսպէս կերպով մը երկրորդ անգամ այլ, և գրեթէ մինչև 'ի հազար տարի վերջ, կատարեցաւ մեր խորին հայրենախօս պատմահօր մարգարէութիւնն (խորենացոյ), թէ Այդ երկու մեծ ցեղերէն՝ 'ի Բագրատունեաց և յԱրծրունեաց՝ թագաւորներ պիտի ըլլան Հայոց յետ շատ ժամանակաց : Արդ Բագրատունի թագաւորութեանն առաջին հեղինակ եղաւ Աշոտ (887), երկրորդ՝ յետ 200 տարւոյ՝ Ռուբէն կամ Լեւոն Ռուբինեան. իսկ Արծրունեաց՝ նախ Խաչիկ-Գաղիկ, և երկրորդաբար մը անձամբ թոռանցն՝ մեր թոռնեանցի Խոիկ ԽԱՉԻԿ՝ :

Հ. Դ. Մ. ԱԼԻՇԱՆ

1 Մեծին Ներսիսի նշխարաց գիւտին պատմիչն (որ թուի Յ. Երզնկացին) կ'ըսէ վասն « Ռուբենի » մեծի իշխանին, որ էր 'ի զօրացն Բագրատուն. » նեաց և յազգէ նորին, և 'ի քանն և 'ի քանն Արծրուն. » նեաց. որ և մեր պապաւորն Լեւոն (Գ. որդի » Զապելի և Հեթմոյ), զերկուցն ունի թագաւ. » ժառանգ ազգաց զազգականութիւն » : Ըսել է որ այս Լեւոն երկու ճիւղով այլ յԱրծրունեաց էր, իսկ իր հայրն Հեթում մէկ ճիւղով, որոյ սկիզբն կ'ենէ յՕշնի՝ մտերմն Ապլղարիպայ. բայց 'ի պատմաց յայտնապէս յիշուած չէ ասոնց խնամութիւնն, ինչպէս և ոչ Ա Ռուբենի այլ ինչպէս վերջին Գաղկայ խնամի և Բագրատունի ըլլան : Գուցէ ինքն իսկ Օշնի այլ՝ որ յԱրցախոյ եկած կ'ըսուի՝ և 'ի Գանձակայ կողմերէն՝ բնիկ ազգաւ Արծրունի ըլլայ :

ՀԻՆ ՔՆԱՐ

Մեղեղի Խաչիկն .

Քերովբէից գերարփի փառօք փառազարդեալ՝ յայտնեաց զբեզ հողանիւթ մարդոյն :

Քանզի սերովբէն բոցեղէն սրովն քառավտակ հոսէր զհուրն, պահելով զճանապարհս ծառոյն կենաց զանմահական տնկոյն :

իսկ դու բանալի եղեր քառաթև, բացեր մեզ զդուռն անեղաշէն դրախտին, զոր փակեաց նախահայրն :

Քանզի 'ի քեզ է միացեալ մարմնով բանն Աստուած, գառն պատարադեալ, բարձրոյն մեղաց և եզն պարարակ, զոր ծնաւ Մարիամ :

Եւ դու ինքնին 'ի քեզ կրեցեր բազկատարած՝ առհաւասար ծայրաթաց ներկար արեամբ որդւոյն Աստուծոյ 'ի քեզ բեեմամբ :

Եւ յահաւոր և 'ի հրախաղաց միայն վերջնումն յետին շարաթին, դու կարապետ յապագային, և առիթ քեզ յամեցելոյ փեսային, 'ի պարծանս ազգի մարդկան :

Եւ մեք յուսով ական կայցուք քեզ յաղթող նշան, զէն անպարտելի և առիթ ևս յաջմէ որդւոյն Աստուծոյ, 'ի պարծանս երկրպագուացս :

Ձի և զմեզ արասցես լինել արթունս և պատրաստս և արժանս, ջահավառ անշէջ լապտերօքն մտանել 'ի յառագաստ ընդ իմաստուն կուսանան, յեօթնս աստեղեան յառագաստն, ուր սուրբք ամենայն հաւաքեալ սպասեն մեծի հարսանեացն և անմահ փեսային :

ՏԵՍԱՐԱՆ ՄԱՐԴԿԱՅԻՆ ՑԵՂԻ

ՈՎԿԻԱՆԻԱ

Ճաւա լեռնոտ կղզի մըն է. լերանց վրայ երեսուն հրաբուխէն աւելի կան, և այն պատճառաւ գետնաշարժ ստէպ կ'ըլլայ հոն. հարաւային կողմը աւելի ապառաժուտ է, իսկ հիւսիսային կողմը դաշտային. և օդն ալ լճացեալ ջրերուն պատճառաւ փնասակար, որով հոն գացող եւրոպացիներէն շատը շուտով կը մեռնին. տաքը ընդհանրապէս սաստիկ է, իսկ կղզւոյն ներսի գաւառներուն կլիման աւելի լաւ է : Գլխաւոր բերքերն են քաֆէ, շաքար, լեղակ, պղպեղ. մահացու թոյն ունեցող հիւթով տեսակ մը ծառ ալ կայ որ աւելի քան կամ պօսկոնքս կ'ըսուի : Զորքոտանի վայրի կենդանիներէն քիչ կը գտնուի ճաւայի մէջ, եղաճներն են վազը և եղջերու. ջրերու մէջ ալ կան պզտի կոկորդիլոսներ. անտառներուն մէջ ալ օձեր ունի, և անբաւ բազմութիւն ալ կայ տեսակ մը ճերմակ մըր :

Ջիւններու որ տներու կահ կարասիքը կը փճացրնեն :

Բուն ճաւացիները ինը միլիոնէն աւելի կը սեպուին, և Հնդկաց ազգակից կը կարծուին ըլլալ. բնութեամբ ծոյլ ու վախկոտ են : Եւրոպացւոց հոն ոտք կոխելէն առաջ բոլոր կղզին մէկ թագաւորութիւն մըն էր, և շատ բարեկարգ ինչպէս որ կ'երևնայ : Լեզուին՝ Հնդկաց լեզուէն առաջ եկած է. սըրբազան լեզու մը ունին որ խաւի կ'ըսուի՝ որ սանսքրիտի մօտ է. իսկ ծովեզերեայ բնակչաց խօսած լեզուն սոչնաւ կ'ըսուի :

Ճաւացիք 1406ին Մահմետի կրօնքը ընդունեցան, և իրենց թուականը Քրիստոսի 73 տարին կը սկսի. մէջերնին բազմակնութիւնը օրինաւոր կը սեպուի :

Հոլանտացւոց առաջին անգամ հոն ոտք կոխած ատեննին՝ չորս տէրութիւն